

ՄԻԱԿԱԶՄ ԼԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵԸ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ «ԻՆՃ ԲԱՑԱԿԱ ԶՂՆԵՔ» ԺՈՂՈՎԱԾՈՒՄԸ

ՀՏԴ 81`36
DOI: 10.56246/18294480-2023.15-25

ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳԴՀ բանասիրական ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ asoyan.60@mail.ru

ՀԱԿՈԲՅԱՆ ՖԵՆՅԱ

ԳԴՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի
մագիստրատուրայի շրջանավարտ
Էլփոստ՝ hakobyanfenya77@gmail.com

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ

Գավառի ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
Էլփոստ՝ haykanushhakobyan4@gmail.com

Լեզվական բանավոր և գրավոր հաղորդակցումը առավել հաճախ տեղի է ունենում այնպիսի նախադասությունների միջոցով, որոնցում առկա են նախադասության երկու գլխավոր անդամներն էլ՝ ենթական և ստորոգյալը: Այդպիսի նախադասությունները կոչվում են երկկազմ, երկբևեռ: Սակայն հաղորդակցումը կարող է տեղի ունենալ նաև այնպիսի նախադասությունների միջոցով, որոնցում առկա է մեկ գլխավոր անդամ: Այդպիսի նախադասությունները քննարկված է անվանել միակազմ, միաբևեռ կամ միակենտրոն: Հենց միաբևեռ լինելը, այսինքն՝ մեկ մասից կազմված լինելն էլ համարվում է միակազմ նախադասությունների էական հատկանիշը:

Միակազմ նախադասությունների կիրառությունը խոսքում երկկազմ նախադասությունների համեմատ թեև սահմանափակ է, սակայն նրանք հետաքրքրություն են ներկայացնում թե՛ լեզվական և թե՛ ոճական առումներով:

Խոսքային իրավիճակով պայմանավորված՝ այդ կառույցները մեծ հնարավորություն ունեն արտահայտելու մարդկային ապրումներն ու զգացմունքները, ստեղծելու կերպարներ ու բնապատկերներ: Դա է պատճառը, որ միակազմ նախադասությունները հաճախ ուսումնասիրության նյութ են դառնում տարբեր ստեղծագործությունների լեզվատճական առանձնահատկությունների բացահայտման տեսակետից:

Չնայած միակազմ նախադասությունների առայսօր կատարված համակողմանի ուսումնասիրությանը՝ միշտ էլ արդիական է մնում առանձին ստեղծագործությունների լեզվատճական քննություն կատարելու առումով:

Ստորև ներկայացված հոդվածում նպատակ ունենք վեր հանել և ցույց տալ միակազմ նախադասությունների կիրառման կարևորությունը և ոճական մեծ հնարավորությունները՝ օգտագործելով Համո Սահյանի «Ինձ բացակա չղներ» ժողովածուն:

Հոդվածը գրելիս օգտագործել ենք նկարագրական, վերլուծական, դիտման մեթոդները:

Բանալի բառեր՝ նախադասություն, միակազմ, անդամ, դիմավոր, բառ-նախադասություններ, ոճական, Համո Սահյան, «Ինձ բացակա չղներ», ստեղծագործություն:

Մեր գրողներից յուրաքանչյուրն ունի իր գեղարվեստական ոճը, բառերի իր աշխարհը: Գրողի ոճի վրա մեծապես ազդում է նրա աշխարհայացքը, մտածելակերպը: Ինչպես ասում է Ե. Չարենցը. «Լեզվի ինդիրը ամենից առաջ ոճի ինդիր է, և չի կարելի այն քննել առանց նկատի առնելու տվյալ երկի ոճը, նրա ուղղությունը: Որևէ երկի լեզուն քննելիս ամենից առաջ պետք է նկատի ունենալ, թե ինչպիսի հեղինակի և ինչպիսի երկի հետ գործ ունենք: Այդ հանգամանքը կարող է շատ անհասկանալի բաներ հասկանալի դարձնել...»¹:

Գրողի ինքնատիպությունը առավել լավ երևում է շարահյուսական միջոցների քննարկության հարցում: «Շարահյուսական միջոցների քննարկությունը ևս պայմանավորված է հեղինակի լեզվամտածողությամբ, նրա ոճական անհատականությամբ, ինչպես նաև կյուրթի թելադրանքով և քնդհանրապես խոսքի գործառական բնույթով»²:

«Միակազմ են այն նախադասությունները, որոնք կա՛մ չունեն ոչ ենթակա, ոչ ստորոգյալ, կա՛մ ունեն միայն ստորոգյալ, և բացակա այդ անդամները վերականգնել հնարավոր չէ, դրանք չեն ենթադրվում»³:

Միակազմ նախադասությունները բաժանվում են երկու տեսակի՝ **դիմավոր կամ անենթակա միակազմ նախադասություններ և անդեմ միակազմ նախադասություններ**⁴:

Դիմավոր կամ անենթակա նախադասությունները «ըստ դիմային իմաստի յուրահատկության լինում են երեք տեսակ՝ ձևական դիմավոր, անորոշ դիմավոր, քնդհանրական դիմավոր»⁵:

Դիմավոր կամ անենթակա նախադասություններ

Ա. Ձևական դիմավոր նախադասություններում «Դեմքը դիմային վերաբերության տեսակետից ձևական է, և նրանով արտահայտված երևույթը, գործողությունը դիմային տեսակետից որևէ ձևով չի կապվում եղողի, կատարողի հետ»⁶:

Համո Սահյանի «Ինձ բացակա չլինեք» ժողովածուում մեծ կիրառություն ունեն ձևական դիմավոր միակազմ նախադասությունները: Այս նախադասությունների ոճական արժեքն այն է, որ հեղինակը նրանց միջոցով կերտում է իր հերոսների հոգեկան աշխարհը, նրանց ապրումները, բնության երևույթներին վերաբերող եղելությունը, խոստովին շրջապատող միջավայրը: ԼԱյսպիսի նախադասություններով հեղինակը ներկայացնում է շոշափելի, տեսանելի պատկերներ, որոնք իրենց մեջ շատ գաղտնիքներ ունեն, իսկ քնթերցողը իր երևակայությամբ պետք է դրանք բացահայտի, հասկանա ու գգա: Շատ են այն կառույցները, որոնց գլխավոր անդամները բաղադրյալ ստորոգյալի տեսք ունեն: Օրինակ՝

*Արթուն սարեր են ու քնած սարեր,
Մեր աղոթքները երկինք տարած,
Աստվածների հետ ասուլիս արած
Ու նրանց սրտից ջուր խմած սարեր:
Մնտառ է այստեղ...*

¹. http://www.yso.am/files/19N_Nersisyan-1458048071-.pdf

². Եզեկյան Լ., Գրական աշխարհագրություն և արևելահայ պատմավեպի լեզուն, Ե., 1990, էջ 171:

³. Գյուլբուրդյան Ս., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Ե., 1967, էջ 29:

⁴. Միակազմ նախադասությունների դասակարգման վերաբերյալ նաև այլ մտտեցումներ կան: Տե՛ս, օրինակ, Թ. Ասոյան, Միակազմ նախադասությունների դասակարգման հարցի շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 5, Երևան, 2018:

⁵. Աբրահամյան Ս., Հայոց լեզու, Ե., 2012, էջ 63:

⁶. Նույն տեղում, էջ 64:

Ձորեր են` լցված տեղի փողերով.
Ճաղատ բլուրներ` փռշոտ կողերով.
Բլուրներն ի վեր ամրոցներ ու բերդ... (32):
Քարե ծառեր են, ծառացած քարեր,
Լրանց ոտքի տակ մրափած դարեր (33):
Բախտ Է...(34):
Գիշեր Է սև, սևակնած.
Ախ, ձիերս, ձիերս (40):
Տար ճառագայթ Է, մրսած փաթիլ...(52):
Գետ Էր, ասենք, մեղքն իր վրա առավ.
Որ ինձ լքեց, այստեղ, դեռ չթաղած (54):
Ի՛նչ ամոթ Էր (55):
-Ի՛նչ երջանիկ պահեր էին,
Ի՛նչ երջանիկ առավոտ Էր (56):
Երեկ ամպ Էր ու ամպամած:
Այսօր ուրախ, արև օր Է (79):
Խոր գիշեր Է (84):
Խեղճության հոտ Է, խենթության հոտ Է,
Պարզության հոտ Է, մաքրության հոտ Է (94):
Այս ի՞նչ խենթություն Է,
Տափ ու տոթ Էր դեռ հունվարին,
Օգոստոսին ձյուն Է ...
Դե արի ու բան հասկացիր.
Շուրջս ամպ ու մեզ Է,
Կուզես ժպտա, կուզես լացիր.
Դարի համար մեկ Է (149):
Ժամն Է լռելու (159):
Մութ Է (188):

Բ. Անորոշ անենթակա կամ անորոշ դիմավոր նախադասություններում «Անորոշությունն արտահայտվում է նրանով, որ ստորոգյալը միայն երրորդ դեմքով է արտահայտվում... Երբեմն խոսողը իմանում է, թե ով է կատարել գործողությունը, բայց տվյալ դեպքում նա կարևորություն չի տալիս կատարողին, այլ ուշադրություն է հրավիրում միայն գործողության վրա»⁷:

Անորոշ անենթակա միակազմ նախադասությունների մասին Ս. Գյուլբուդադյանը գրում է. «Ենթական չհիշատակելը բոլոր դեպքերում ունի նաև ոճական նշանակություն: Այդ ձևով խոսողը լսողի ուշադրությունը կենտրոնացնում է նախադասության բովանդակության, մտքի վրա, տեղի ունեցած դեպքի, երևույթի վրա»⁸:

Եզակի թվի երրորդ դեմքով արտահայտված անենթակա նախադասությունները արտահայտում են քնարական հերոսի ապրումները և խոհերը` ստեղծելով խոսքային համապատասխան միջավայր և իրավիճակ: Այս նախադասությունները նպաստում են բանաստեղծական խոսքի ուժգնությանն ու քնարականությանը:

Ինձ խաբեցին ամենուր,
խաբեությամբ խաչեցին:

⁷. Աբրահամյան Ս. և ուրիշներ, Հայոց լեզու, Շարահյուսություն, Ե.1975, էջ 276-277:

⁸. Տե՛ս Ասոյան Թ., Վարդանյան Ն., Միակազմ նախադասությունները և նրանց ոճական արժեքը Կ. Չարյանի «Նավը լեռան վրա» վեպում, ԳՊՀ, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 14, 2012, էջ 362:

Ձեռքիս խաչբուռը առան
Ու վրաս իաչ քաշեցին
-Քոնն է աշխարհն,- ասացին,
Տանս քարերը տարան...(11):
Առան աղբյուրն էլ մի օր,
Մոտիկ քաղաքը տարան...(12):
Հետո եկան ու ցամաք
Գաղափարներ դաշեցին(13):
Չգիտեմ, թե ով է մեր տերը,
Ասում են՝ բոլորս մի տուն ենք...(41):
Ասում են թե սովն է գալիս
Վիտրժակով աշխարհակուլ (146):
- Հիվանդ է ձեր խոնարհ երգիչը,
Երևի հոգեվարք է ապրում,
Ասում են.- Այդքանը դեռ քիչ է.
Արժանի պատիժը դեռ չի կրում (205):

Գ.Ընդհանրական դիմավոր նախադասություններում «Ստորոգյալի գործողությունը հավասարապես վերաբերում է բոլոր դեմքերին. դեմքը միայն ձևական նշանակություն ունի և արտահայտման միջոց է»⁹:

Ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունները մեծ մասամբ խորհուրդներ են, խրատներ, առաջարկություններ, առաձևեր, կամ նրանց նշանակությունը մոտենում է առաձևերի նշանակությանը:

Մի բուռ աշուն բերեք Մթնածորից,
Մի բուռ աշուն բերեք, մի բուռ աշխարհ:
Թափուր մի բույն բերեք:
Ամպի կծիկ բերեք, անձրևի թել (22):
Միշտ չի մնա սարը միգում,
Մի ասեք թե՛ ավեր է...(79):
Մի լուր բերեք, մի ջուր բերեք,
Մի նուր բերեք Տատնա ծորից (82):
Ինձ մի ջուր բերեք Տատնա գետակից,
Տատնա գետակի գմբուխտյա ակից:
Երբ ծարավ, իսկեցեք մի բուռ,
Խմեցեք, դարձեք մի-մի Սասնա ծուռ...(97):
Ոչ խոստումներ, ոչ երդում,
Չսպասեք ու չքննեք...
Անվերջ, անշարժ ձեր երթում
Ինձ բացակա չդնեք (232):

Անդեմ նախադասություններ

Անշուշտ, պետք է համաձայնել լեզվաբանության մեջ արտահայտված այն կարծիքին, որ անդեմ նախադասությունների զգալի քանակը պայմանավորված է երկու հանգամանքով՝ սեղմ խոսք ստեղծելու ձգտումով և ավելի շատ զգացմունք, հույզ, տրամադրություն արտահայտելու հակումով:

«Անվանական անդեմ նախադասություններով հաճախ արտահայտվում է կամային-հոգեկան վերաբերմունք՝ զարմանք, հիացմունք, թելադրանք և այլն, որոնց ոճական արժեքը պայմանավորվում է ոչ միայն անդիմությանմբ, այլև

⁹. Աբրահամյան Ս. և ուրիշներ., Հայոց լեզու, Շարահյուսություն, Ե., 1975, էջ 277:

համառոտությամբ և հնչերանգով: Հոգեկան լարվածությունը, համապատասխան իրադրությունը պահանջում են միայն խիստ անհրաժեշտ բառեր, և դա էլ առաջացնում է ոճի սեղմությունը»¹⁰:

Անդեմ նախադասություններն իրենց կազմությամբ միատեսակ չեն: Նայած թե անդեմ նախադասության գլխավոր անդամը ինչ խոսքի մասով է արտահայտվում, ըստ այդմ այն կոչվում է **անվանական** կամ **բայական**:

«Ինձ բացակա չղներ» ժողովածուի լեզուն աչքի է ընկնում **անվանական անդեմ նախադասությունների** հաճախակի կիրառությամբ: Առաջին հայացքից կարող է թվալ՝ հեղինակը թվարկում է առարկաներ, բայց դա պարզապես թվարկում չէ, նրանցում նկատվում է որոշակի վերաբերմունք: Նկատելի է, որ գլխավոր գոյականը արտահայտվում է առանց հոդի և արտահայտում է ոչ թե որոշակի առարկա, այլ ընդհանրապես տվյալ տեսակի առարկաներ: Նման նախադասությունները ստեղծում են հանդիսավոր ոճ՝ ստեղծելով տեսողական պատրանք:

Առավոտ: Մահվան խորհուրդ:

Անմահության համ ու հոտ... (9):

Չորս կողմը սարեր... (32):

Ախ, ձիերս, ձիերս...

Գազաթների հողմից

Թներ խլած ձիերս,

Սուրբ ավերից Աստծո

երկինք խմած ձիերս:

Երկինք խմած... ու վայրի

Հաճարի հասկ, առվույտի

Ծաղիկ կերած ձիերս,

Ախ, իմ քուռկիկ Զալալի,

Քո սիգասար, սիգավոր

Տոհմից սերած ձիերս,

Ախ, ձիերս, ձիերս...

Դունչ ու սմբակ ցողաթաց,

Մորամերկ ու կողարաց,

Արևի մեջ լողացած,

Կրակ կտրած, պաղացած,

Ախ, ձիերս, ձիերս...

Ճերմակ, կարմիր, ոսկեգույն,

Բոց ու կրակ ձիերս,

Հերիաթներից կյանք մտած

Ղաշխա քուռակ ձիերս (39-40):

Փշեր, գարի, սևեր... (51):

Շիրիմների վրա տազնապ ու ժխոր(35):

Ախ, իմ խոնարի, խելոք,

խելացնոր աշխարհ,

Միշտ երեխա, միշտ ծեր,

Միշտ հին ու նոր աշխարհ (74):

Խուլ կրակոց... (75):

Օրհնված օր... (85):

Լեռներն ի վար քարերի երթ,

Քարերի լուռ տեղատարափ...

Քանդուքարափ Որոտնաբերդ,

Որոտնավանք քանդուքարափ (152):

Ով բարեյոկյան թեժ խառնակություն,

¹⁰, Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, Ե., 1986, էջ 171:

Բայց և համր ու պաղ հմայքի աշխարհ... (173-174):

Ի՞նչ հոգեհանգիստ և ի՞նչ հոգեհաց:

Ի՞նչ սգո թափոք և ի՞նչ հոգեհաց (215):

Բայական անդեմ նախադասության գլխավոր բառը արտահայտվում է անորոշ դերբայով, չնայած երբեմն հանդես է գալիս նաև հարակատար դերբայը: Բայական անդեմ նախադասության ոճական արժեքը հենց այս կառուցվածքով է պայմանավորված: Կարևորը հենց կատարվելիք գործողությունն է. գործողը երկրորդական է:

Բայական անդեմ նախադասությունները բազմազանություն են դրսևորում նաև հնչերանգի առումով: Կիրառական մեծ հաճախականություն ունեն հարցական հնչերանգ ունեցող կառույցները, որոնք արտահայտում են ներքին հարցում, խոսողի երկմտանքը, կասկածը որևէ գործողության կատարման վերաբերյալ, ինչպես նաև ճարտասանական հարցադրում: Հոգեբանական ծանր իրավիճակներ նկարագրելիս գրողը երբեմն գործածում է այդպիսի նախադասություններ: Այս նախադասություններում հերոսի անորոշ վիճակը, երկընտրանքը, կասկածը ավելի տպավորիչ են դառնում:

Ի՞նչ **ասել**, կածան (73):

Ի՞նչ **արած**, կյանքում հաճախ

Անկումի պահեր են լինում (108):

Ի՞նչ, **բկին մնա՞լ**... (197):

Ոճական մեծ արժեք ունեն նաև հրամայական և բացականչական անդեմ նախադասությունները: Հ. Սահյանի այս ծողովածուում նման օրինակներ չեն հանդիպում:

Միակազմ նախադասության տեսակ են բառ-նախադասությունները, որոնք «Լրացումներ չեն ընդունում և արտահայտում են ժխտում, հաստատում, համաձայնություն ու անհամաձայնություն, դրդում, ամբողջական ասվածի եղանակային ու արտահայտչական գնահատություն»¹¹:

«Բառ-նախադասությունները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ հաստատական, ժխտական, հարցական»¹²:

Բառ-նախադասությունները ոճական մեծ արժեք ունեն՝ հատկապես գործածվելով բանավոր խոսքում: Գրավոր խոսքում գործածվելիս ինչպիսիք են ժամանակ, տեղ, խոսքը դարձնում են շատ արտահայտիչ, դիպուկ, հուզական, գեղեցիկ, գեղարվեստական շնչով օժտված: Նրանք արտահայտում են հեզևանք, ծաղր, հաստատում, ժխտում, հարցում, երկբայություն և այլն:

Այս ժողովածուում բառ-նախադասություններ քիչ են հանդիպում:

- Հետո՞: Ի՞նչ հետո (8) :

Ուշացավ: Ոչինչ: Ուր որ է կգա (96):

- Ոչինչ,- ասացին,- Գողը տնից էր (187):

Համո Սահյանի «Ինձ բացակա չունեք» ժողովածուում շատ են միակազմ նախադասություններ, որոնցից առավել շատ հանդիպում են ձևական դիմավոր և անվանական անդեմ նախադասությունները: Նկատելի է, որ գրողը կարողացել է ճիշտ գնահատել նրանց կիրառման կարևորությունը և ոճական մեծ հնարավորությունները:

Օգտագործված գրականության ցանկ

¹¹. Աբրահամյան Ս. և ուրշներ, Հայոց լեզու, երկու հատորով, հտ. 2, Ե., 1975, էջ 290:

¹². Աբրահամյան Ս., Հայոց լեզու, Ե., 2012, էջ75:

1. Աբրահամյան Ս., Հայոց լեզու, «Լույս» հրատարակչություն, Երևան, 2012:
2. Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու. շարահյուսություն, երկու հատորով, հտ. 2, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1975:
3. Ասոյան Թ., Միակազմ նախադասությունների դասակարգման հարցի շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 5, Երևան, 2018:
4. Ասոյան Թ., Վարդանյան Ն., Միակազմ նախադասությունները և նրանց ոճական արժեքը Կ. Չարյանի «Նավը լեռան վրա» վեպում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ. 14, 2012:
5. Գյուլբուղդյան Ս., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, «Միտք» հրատարակչություն, Երևան, 1967:
6. Եզեկյան Լ., Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Երևան, 1990:
7. Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1986:
8. <https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-31/b3b60c0eca2fb1cd662b629e3b3fe9d9.pdf>
9. http://www.yసు.am/files/19N_Nersisyan-1458048071-.pdf

**STYLISTIC FUNCTIONS OF SIMPLE SENTENCES IN THE COLLECTION
“DON'T MARK ME ABSENT” BY HAMO SAHYAN**

ASOYAN TATUL

*PhD in Philology, Associate Professor
Dean of the Faculty of Philology, GSU
e-mail: asoyan.60@mail.ru*

HAKOBYAN FENYA

*Graduate of the Master Program of the Department of Armenian Language and
Literature, Faculty of Philology, GSU
e-mail: hakobyanfenya77@gmail.com*

HAKOBYAN HAYKANUSH

*Teacher of Armenian Language and Literature of
Gavar High School
e-mail: haykanushhakobyan4@gmail.com*

The oral and written forms of communication are most often realized through sentences that contain main members of the sentence - the subject and the predicate. Such sentences are called “bipolar”. But communication can also occur through sentences in which there is one main member. Such sentences are commonly referred to as simple, “unipolar”. It is the single-component nature that is considered an essential characteristic of simple sentences. Although the use of simple sentences in speech is limited compared to compound ones, they are interesting both linguistically and stylistically.

Conditioned by the speech situation, these constructions can convey the expressiveness of human emotions, create artistic imagery, and vividly depict reality.. In literary fiction the full diversity of forms and ways of functioning of simple sentences is most vividly manifested. This is the reason why simple sentences often become the subject of research from the perspective of identifying the linguo-stylistic features of various works.

The aim of the article is to identify and demonstrate the stylistic possibilities and peculiarities of the functioning of simple sentences based on the material of the

collection "Don't mark Me Absent" by Hamo Sahyan. Descriptive, analytical, and observational methods were used in the article.

Keywords: sentence, simple sentence, impersonal sentence, personal sentence, one-word sentence, stylistic, Hamo Sahyan, work "Don't mark me absent".

СТИЛИСТИЧЕСКИЕ ФУНКЦИИ ОДНОСОСТАВНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В СБОРНИКЕ АМО САГИЯНА «НЕ СТАВЬТЕ МНЕ ОТСУТСТВИЕ»

АСОЯН ТАТУЛ

Кандидат филологических наук, доцент
Декан филологического факультета ГГУ
электронная почта: asoyan.60@mail.ru

АКОПЯН ФЕНЯ

Выпускница магистратуры отделения армянского языка и литературы
филологического факультета ГГУ
электронная почта: hakobyanfenya77@gmail.com

АКОПЯН АЙКАНУШ

Учительница армянского языка и литературы
старшей школы г. Гавар
электронная почта: haykanushhakobyan4@gmail.com

Устная и письменная формы речевой деятельности чаще всего осуществляются посредством таких предложений, в которых присутствуют оба главных члена предложения-подлежащее и сказуемое. Такие предложения называются двусоставными. Но общение может происходить и через предложения, в которых есть один главный член.

Однако речевую деятельность можно также осуществлять через предложения, в которых присутствует один главный член. Такие предложения обычно называют односоставными или однокомпонентными. Именно однокомпонентность считается существенным признаком односоставных предложений. Хотя и использование односоставных предложений в речи по сравнению с двусоставными ограничено, но они представляют интерес как в лингвистическом, так и в стилистическом аспектах.

Обусловленные речевой ситуацией, эти конструкции могут передавать экспрессивность человеческих эмоций, создавать художественную образность, наглядно изображать действительность. Именно в художественной литературе ярче всего проявляется все многообразие форм и способов функционирования односоставных предложений. Это и есть причина того, что односоставные предложения часто становятся предметом исследования с точки зрения выявления лингвостилистических особенностей различных произведений.

Цель данной работы-выявить и показать стилистические возможности и особенности функционирования односоставных предложений на материале сборника Амо Сагияна "Не ставьте мне отсутствие".

В работе нами были использованы описательный, аналитический, наблюдательный методы.

Ключевые слова: предложение, односоставные, безличные, личные, слова-предложения, стилистически, Амо Сагиян, произведение, "Не ставьте мне отсутствие".

Հոդվածը գրախոսվել է 28.06.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: